ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Անի Խանաղյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության եկամուտների քաղաքականության և հարկային վարչարարության մեթոդաբանության բաժնի ավագ մասնագետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), 2024 թվականի ապրիլի 22-ից մինչև մայիսի 3-ը:

3. Հրավիրող կողմը.

Արժույթի Միջազգային Հիմնադրամ.

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Հարկաբյուջետային շրջանակներ» («Fiscal Framworks (FF) թեմայով դասընթացի նպատակն էր զարգացնել և խորացնել հարկաբյուջետային շրջանակներին առնչվող հմտությունները, մեկնաբանել դրանց հիմնական հասկացությունները, ծանոթանալ վերջիններիս վերլուծության և կիրառելիության ներկայիս ժամանակակից մեթոդներին:

5. Քննարկված թեմաները.

Դասընթացի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) Հարկաբյուջետային շրջանակների կարևորությունը,
2) Հարկաբյուջետային ինստիտուտների դերը,
3) Հարկաբյուջետային վիճակագրության ուսումնասիրություն,
4) Հարկաբյուջետային պլանի իրականացում. Կրիտիկական կետեր,
5) Անցում դեպի դեֆիցիտ և պրոցիկլիկություն,

6) Բյուջետային կանոններ. դիզայն, ինչպես են դրանք գործում,

7) Բյուջետային կանոններ. բյուջետային խորհուրդների դերը,

8) Հարկաբյուջետային կանոններ, դրանց կիրառելիություն, գործունեությունը,

9) Հարկաբյուջետային ռիսկերի կառավարում և պարտավորություններ բացահայտում,

10) Միջնաժամկետ բյուջետային շրջանակներ,

11) Հարկաբյուջետային թափանցիկություն,

12) Հարկաբյուջետային կայունություն և պարտքի կառավարում,

13) Հարկաբյուջետային քաղաքականության փաթեթի նախագծում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացի ընթացքում առանձին հանդիպումներ և ելույթներ նախատեսված չէին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ուսումնասիրելով դասախոսությունները, մասնակցելով աշխատաժողովներին, ինչպես նաև հաշվի առնելով պետության կողմից իրականացվող եկամտային (այդ թվում՝ հարկային) քաղաքականության հնարավոր ազդեցությունը հարկաբյուջետային շրջանակների վրա՝ դասընթացի ընթացքում ձեռքբերված գիտելիքները օգտակար կլինեն նախատեսվող աշխատանքների արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Ստորագրությունը, ամսաթիվը:

07.05.2024թ.